

«ՎԱՆԱԶՈՐԻ Հ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ»

ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

Հավելված 1

«Վանաձորի Հ.Թումանյանի անվան

պետական համալսարան» ՊՈԱԿ-ի

ռեկտորի 28.12.2015 թ. թիվ 1038 Լ/Կ հրամանի

#### ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

ՎԱՆԱԶՈՐԻ Հ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ

ՄԱԳԻՍՏՐՈՍԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ

Ընդունված է ՎՊՀ-ի գիտխորհրդի կողմից

Արձանագրություն թիվ 9 24.12.2015թ.

Վանաձոր

2015թ.

1. «Վանաձորի Հ.Թումանյանի անվան պետական համալսարան» ՊՈԱԿ-ի (այսուհետ՝ Համալսարան) մագիստրոսական ծրագրի ղեկավարի (այսուհետ՝ Ղեկավար) գործունեության կանոնակարգի (այսուհետ՝ Կանոնակարգ) իրավական հիմքերն են՝ «Բարձրագույն և հետբուհական կրթության մասին» ՀՀ օրենքը, ՀՀ կրթության և գիտության նախարարի 06.12.2007թ. թիվ 1193-Ն հրամանը, Համալսարանի կանոնադրությունը:

2. Ղեկավարը նշանակվում է ռեկտորի հրամանով՝ ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտորի ներկայացմամբ՝ ֆակուլտետի խորհրդի որոշման հիման վրա (քաղվածք ֆակուլտետի խորհրդի նիստի արձանագրությունից):

3. Ղեկավարը պետք է ունենա գիտական աստիճան, ոչ պակաս, քան 5 տարվա գիտամանկավարժական աշխատանքի և ոչ պակաս, քան 2 տարվա ղեկավար աշխատանքի փորձ:

4. Ղեկավարն իրավունք ունի՝

4.1 ղեկավարելու երկու մագիստրոսական կրթական ծրագրեր՝ գիտությունների դոկտորի աստիճան ունենալու դեպքում,

4.2 որոշել մագիստրոսական թեզերի ընդհանուր ուղղվածությունը,

4.3 առաջարկել մագիստրոսական թեզերի անհատական թեմաներ ինչպես իր նախաձեռնությամբ, այնպես էլ մագիստրանտների ներկայացմամբ:

5. Ղեկավարի գործունեության նպատակներն են՝

5.1 ապահովել կրթական չափորոշիչներով սահմանված մագիստրոսական կրթական ծրագրի կատարումը,

5.2 նպաստել մագիստրոսական կրթական ծրագրերի որակի բարձրացմանը՝ հիմք ընդունելով ՀՀ կրթության և գիտության նախարարության՝ կրթության որակի ապահովման ոլորտում ընդունված որոշումները:

6. Ղեկավարի գործունեության խնդիրներն են՝

6.1 իրականացնել աշխատանքներ մագիստրոսական կրթական ծրագրերի արդիականացման ուղղությամբ՝ նպատակ ունենալով այդ ծրագրերի համապատասխանեցումը բարձրագույն կրթության Եվրոպական որակավորումների պահանջներին,

6.2 նպաստել մագիստրոսական կրթական ծրագրերի գիտահետազոտական հատվածով նախատեսված բաղադրիչների (կուրսային աշխատանք, ռեֆերատ, գիտական զեկուցում, գիտահետազոտական աշխատանք մագիստրոսական ատենախոսության թեմայով, հոդված և այլն) որակի բարելավմանը,

6.3 ուսումնասիրել մագիստրատուրայում դասավանդվող առարկաների ծրագրային փաթեթները, մասնակցել դրանց քննարկմանը թողարկող ամբիոններում՝ տալով առաջարկներ ծրագրային փաթեթների վերանայման և արդիականացման վերաբերյալ,

6.4 մասնակցել թողարկող ամբիոնների՝ մագիստրատուրայի ուսումնական գործընթացի քննարկմանը նվիրված նիստերին,

- 6.5 պարբերաբար մասնակցել մագիստրատուրայի ուսումնական պարապմունքների դասալսումներին,
- 6.6 վերահսկել մագիստրատուրայի գիտամանկավարժական և գիտահետազոտական պրակտիկաների անցկացումը:
7. Ղեկավարը իրականացնում է հետևյալ հիմնական գործառույթները.
- 7.1 ուսումնասիրում է գործող մագիստրոսական ծրագրերը և պետական չափորոշիչները,
- 7.2 մասնակցում է մագիստրոսական կրթական ծրագրի պարտադիր դասընթացների կրթաբովանդակական ձևավորմանը,
- 7.3 ապահովում է առարկայական ուսումնական ծրագրերի, պրակտիկաների ծրագրերի մշակումը և հաստատումը,
- 7.4 ներկայացնում է առաջարկներ ամբիոններին՝ անհրաժեշտ ուսումնամեթոդական նյութերի մշակման համար,
- 7.5 վերահսկում է մագիստրատուրայի ուսումնական պլանների գիտահետազոտական աշխատանքի հատվածում առանձին տողով նախատեսված բաղադրիչների պատրաստման, ներկայացման և հանձնման հետ կապված աշխատանքները,
- 7.6 վերահսկում է մագիստրոսական ատենախոսությունների կատարման՝ պլանով նախատեսված աշխատանքների իրականացումը,
- 7.7 կազմում և իրականացնում է մագիստրոսական ծրագրերի մոնիթորինգի պլան, նախապատրաստում է առաջարկներ՝ մագիստրոսական կրթական ծրագրերի, մագիստրատուրայի ուսումնական գործընթացի կազմակերպման վերանայման անհրաժեշտության մասին,
- 7.8 կազմակերպում է խորհրդատվություններ մագիստրանտների համար՝ նրանց անհատական ուսումնական պլաններում ընդգրկված աշխատանքների մասին,
- 7.9 կատարում է մագիստրոսական ատենախոսությունների թեմաների փորձաքննություն,
- 7.10 նախապատրաստում է առաջարկներ՝ մագիստրոսական ատենախոսությունների ղեկավարների թեկնածությունների մասին,
- 7.11 ներկայացնում է որոշումներ՝ ուսանողներին մագիստրոսական ատենախոսությունների պաշտպանության թույլտվության մասին,
- 7.12 կազմակերպում և անցկացնում է հանդիպումներ մագիստրատուրայի ուսանողների հետ՝ մագիստրատուրայի ուսումնական գործընթացին վերաբերող՝ ուսանողներին հետաքրքրող հարցերի շուրջ,
- 7.13 գիտական խորհրդի քննարկմանն է ներկայացնում ընթացիկ ուսումնական տարվա աշխատանքային պլանը, իսկ ուսումնական տարվա ավարտին ներկայացնում է հաշվետվություն՝ իր կատարած աշխատանքի մասին:

8. Ղեկավարը պատասխանատվություն է կրում օրենքների, այլ իրավական ակտերի պահանջները, իրեն վերապահված լիազորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու կամ էլ վերազանցելու համար:

9. Ղեկավարը նշանակվում է պաշտոնում և ազատվում է պաշտոնից Համալսարանի ռեկտորի հրամանով: